# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «31» հոկտեմբերի 2018թ.

2018թ-ի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 17:00-ին, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | | |
|---|---|---|
| Վահան | Ղարիբյան | «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման բաժնի պետ |
| Մարիանա | Վասիլյան | «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման մասնագետ |
| Լիլիթ | Վարոսյան | «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ |
| Էլլա | Սարգսյան | «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ֆինանսական պլանավորման մասնագետ-վերլուծաբան: |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

| | | |
|---|---|---|
| Տիրան | Լաճիկյանը | «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ: |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վահան Ղարիբյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/, վերջինիս/ներիս/ կողմից ներկայացված հայտի/երի/ գնահատման և առաջարկված գնի/երի/ մասին:

## 1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ/ԵՐ/ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ/ԱՆՑ/, ՎԵՐՋԻՆԻՍ/ՆԵՐԻՍ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ/ԵՐԻ/ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Վահան Ղարիբյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 600 000 ՀՀ դրամ:

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 17:00-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Որոշվեց՝

1. Վահան Ղարիբյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Ընթացակարգը բոլոր չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը բոլոր չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Ղարիբյան ______________

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Վասիլյան ____________

Լ. Վարոսյան ____________

Է. Սարգսյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան ____________